ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/119/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 մայիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի մայիսի 29-ին քննելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Սամվելի Բաղիրյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/119/2024 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 29-ի «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների շրջանակը հաստատելու մասին» N 01-Լ որոշման հիման վրա

իրականացրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Սամվելի Բադիրյանի կողմից 2023 թվականի մայիսի 30-ին ներկայացված «Պաշտոնատար անձի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) վերլուծություն, որի արդյունքում պարզել է.

1.2 Արմենուհի Սամվելի Բադիրյանի կողմից 2023 թվականի մայիսի 30-ին Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում տվյալներ ներկայացված չեն ամուսնու՝ (Հայտարարագրում ներկայացված տվյալների համաձայն) Հայկ Ալումյանի, «ՆԻԻՊ-Ալֆա» ՓԲ Ընկերությունում և «Արևահամ» ՍՊ Ընկերությունում մասնակցության վերաբերյալ:

1) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Հայկ Ալումյանը հանդիսանում է «Արևահամ» ՍՊ Ընկերության (ՀՎՀՀ՝) մասնակից 19% բաժնեմասնակցությամբ:
2) «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲ Ընկերության արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում առկա տեղեկատվության համաձայն՝ Հայկ Ալումյանը հանդիսանում է «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲ Ընկերության (ՀՎՀՀ՝) բաժնետոմսերի սեփականատեր (2019 թվականին ձեռք է բերել 5,669 և օտարել 1,470 հատ բաժնետոմս, 2020 թվականին ձեռք է բերել 1,504 հատ, իսկ 2021 թվականին՝ 500 հատ բաժնետոմս):

1.3 Հանձնաժողովն Արմենուհի Սամվելի Բադիրյանի Հայտարարագրում չներկայացված տվյալների առնչությամբ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարչական իրավախախտման կապակցությամբ Արմենուհի Սամվելի Բադիրյանին հասցեագրել է թիվ 01/1278-2024 ծանուցումը՝ այն օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնված (ստացված) համարվելու օրվան հաջորդող երրորդ օրը, ժամը՝ 11:00-ին հրավիրելով Հանձնաժողով վերոնշյալ առերևույթ խախտման վերաբերյալ վարչական իրավախախտման մասին արձանագրություն կազմելու, իսկ հինգերորդ օրը,

ժամը՝ 11:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու: Վերոնշյալ ծանուցումն Արմենուհի Բաղիրյանի կողմից ստացվել է 2024 թվականի մայիսի 21-ին:

1.4 2024 թվականի մայիսի 17-ին Հանձնաժողովն Արմենուհի Բաղիրյանի Հայտարարագրում չներկայացված տվյալների հիմքով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ և կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ որոշում է կայացրել, որի կապակցությամբ թիվ 01/1709-2024 գրությամբ ծանուցել է վերջինիս: Միաժամանակ, կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ գրություններ են ուղարկվել ՀՀ Արդարադատության նախարարին /թիվ 01/1702-2024/ և ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նախագահին /թիվ 01/1704-2024/:

Վարույթի շրջանակներում «ՆԻԻՊ-Ալֆա» ՓԲ Ընկերության և «Արևահամ» ՍՊ Ընկերության 2022 թվականի իրացման շրջանառության, շահութահարկի, ինչպես նաև նշված ընկերությունների կարգավիճակի /ժամանակավոր դադարեցված լինելու ժամանակահատվածի/ վերաբերյալ տեղեկատվություն հայցելու նպատակով Հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 17-ին թիվ 01/0602-2024 գրությամբ հարցում է կատարվել Պետական եկամուտների կոմիտեին, որին ի պատասխան՝ 2024 թվականի մայիսի 24-ի թիվ 01/71-6/31954-2024 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ «Արևահամ» ՍՊ Ընկերության գործունեությունը 2021 թվականի փետրվարի 11-ից ժամանակավոր դադարեցված է, իսկ «ՆԻԻՊ-Ալֆա» ՓԲ Ընկերությունն ունի գործող կարգավիճակ, և վերջինիս՝ 2022 թվականի շրջանառությունը կազմում է ՀՀ դրամ: Գրությամբ, միաժամանակ, նշվում է, որ նշված ընկերությունները 2022 թվականի համար շահութահարկի հաշվարկներ չեն ներկայացրել:

1.5 2024 թվականի մայիսի 22-ին Արմենուհի Բաղիրյանի կողմից Հանձնաժողով մուտքագրված Մ-2328-2024 գրությամբ վերջինս տեղեկացրել է, որ անհրաժեշտ է համարում իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը վարչական իրավախախտման վերաբերյալ

արձանագրության կազմման գործընթացին, սակայն 2024 թվականի մայիսի 14-ից գտնվում է նպատակային արձակուրդում /կից ներկայացվել են անաշխատունակության թերթիկի և երեխայի ծննդյան վկայականի արտատպված պատճենները/: Միաժամանակ, միջնորդել է հետաձգել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման գործընթացը՝ նկատի ունենալով, որ հարգելի պատճառով հնարավորություն չունի ծանուցմամբ նշված օրն իր մասնակցությունն ապահովելու:

1.6 Ի պատասխան վարույթի մասնակցի կողմից ներկայացված միջնորդության՝ Հանձնաժողովը թիվ 01/1726-2024 գրությամբ հայտնել է, որ վարույթի իրականացման՝ օրենքով սահմանված ժամկետով սահմանափակված լինելու հանգամանքով պայմանավորված՝ Հանձնաժողովը չի կարող բավարարել վերջինիս միջնորդությունը՝ միաժամանակ տեղեկացնելով, որ նշված գործընթացին մասնակցելու իր իրավունքը վերջինս կարող է իրացնել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով:

1.7 2024 թվականի մայիսի 24-ին պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/152/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.8 2024 թվականի մայիսի 24-ին վարույթի մասնակցի կողմից մուտքագրված թիվ Մ-2424-2024 գրությամբ ներկայացվել է պարզաբանում սույն վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և թիվ Մ-2406-2024 գրությամբ միջնորդություն՝ որով միջնորդել է Հանձնաժողովի կողմից հրավիրված նիստերին հրավիրել ամուսնուն՝ Հայկ Ալումյանին, վարույթում քննարկվող հանգամանքների վերաբերյալ բացատրություններ /ցուցմունքներ/ ներկայացնելու համար:

1.9 2024 թվականի մայիսի 29-ին գործի քննությունն իրականացվել է վարույթի մասնակցի ներկայացուցչի՝ Քնարիկ Խաչիկի Սրապիվոնյանի (հիմք՝ 27.05.2024 թվականին տրված լիազորագիր) (այսուհետ նաև՝ Ներկայացուցիչ) և վարույթի մասնակցի ամուսնու՝ Հայկ Ալումյանի մասնակցությամբ:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում, պարզաբանումներ և վկայի բացատրություններ

2.1 Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/119/2024 գործի շրջանակներում արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2024 թվականի մայիսի 24-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-2424-2024 գրությամբ վարույթի մասնակիցը ներկայացրել է պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում) առ այն, որ «ՆԻԻՊ-Ալֆա» ՓԲ Ընկերության վերաբերյալ տեղեկություններն իրեն ընդհանրապես հասանելի չեն եղել: Անդրադառնալով «Արևահամ» ՍՊ Ընկերությանը՝ նշել է, որ տեղյակ չի եղել, որ ամուսնու՝ Հայկ Ալումյանի, մասնակցությամբ հիմնվել է այդպիսի ընկերություն:

Հայկ Ալումյանն իրեն այդ մասին չի տեղեկացրել, միաժամանակ, չեն եղել այնպիսի իրադարձություններ, որոնց արդյունքում կարող էր ենթադրել, որ վերջինիս մասնակցությամբ հիմնվել է այդպիսի ընկերություն: Մինչդեռ, ակնհայտ է, որ հայտարարագրում տվյալներ չներառելը կարող է դիտարկվել որպես զանցանք կամ իրավախախտում միայն այն պարագայում, եթե առկա է դիտավորություն /ուղղակի կամ անուղղակի/. նկարագրված իրավիճակում դիտավորությունն ակնհայտորեն բացակայում է: Հայտնել է նաև, որ ինքը տեղյակ է, որ Հայկ Ալումյանը զբաղվում է փաստաբանական գործունեությամբ, անհատ ձեռնարկատեր է, և վերջինիս ամբողջ եկամուտը պայմանավորված է այդ գործունեությամբ, հետևաբար ենթադրել, որ նա հանդիսանում է առևտրային կազմակերպությունների անդամ՝ որևէ փաստական հիմք չի ունեցել, առավել ևս որ նա մշտապես հրաժարվել է հայտարարագրել իր ունեցվածքը և եկամուտները: Միաժամանակ, հավելել է, որ եթե նույնիսկ իմանար այդ առևտրային կազմակերպություններում ամուսնու մասնակցության մասին, ապա այդ ենթադրյալ իրավախախտումները տեղի են ունեցել 2019 և 2022 թվականներին, անցել են մեկ տարվա ժամկետները, և խնդրել է դա կիրառել:

2.2 2024 թվականի մայիսի 29-ին գործի քննությանը մասնակցող վարույթի մասնակցի Ներկայացուցիչը պնդեց վարույթի մասնակցի դիրքորոշումն առ այն, որ վերջինս տեղեկացված չի եղել ամուսնու՝ առևտրային կազմակերպություններում ունեցած

մասնակցության վերաբերյալ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամուսինը բացի փաստաբանական գործունեությունից որևէ այլ ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու հաստատուն դիրքորոշում է մշտապես արտահայտել և հիմք չունենալով կասկածելու վերոնշյալի ճշմարտացիությանը՝ չի փորձել տվյալներ ճշգրտել և հետո միայն լրացնել Հայտարարագիրը:

Նիստը նախագահողի (Մարիամ Գալստյան) հարցին՝ Արմենուհի Բադիրյանից փորձել է ճշտել, թե վերջինս իր ամուսնուց հարցրել է արդյոք քննարկման առարկա առևտրային կազմակերպություններում ունեցած մասնակցության վերաբերյալ, Ներկայացուցիչը հայտնեց, որ Արմենուհի Բադիրյանի՝ նպատակային արձակուրդում գտնվելու և երեխայի խնամքով զբաղվելու հանգամանքով պայմանավորված՝ հնարավորություն չեն ունեցել նշված հարցերը մանրամասն քննարկել և նման հարցադրում վարույթի մասնակցին չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է կատարված արարքին գնահատական տալիս հաշվի առնել վերոնշյալը:

2.3 2024 թվականի մայիսի 29-ին գործի քննությանը վկայի կարգավիճակով մասնակցող վարույթի մասնակցի ամուսին Հայկ Ալումյանը, անդրադառնալով սույն վարույթի շրջանակներում քննարկվող առևտրային կազմակերպություններում իր ունեցած մասնակցությանը, ներկայացրեց, որ «Արևահամ» ՍՊ Ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է, և որևէ գործունեություն չի ծավալում: Ինչ վերաբերում է «ՆԻԻՊ-Ալֆա» ՓԲ Ընկերությանը՝ ապա հայտնեց, որ նշված ընկերության բաժնետոմսերը ստացել է հորից որպես ժառանգություն, իսկ հետագայում ևս մի քանի բաժնետոմս է ձեռք բերել: Ընդ որում, մինչև ժառանգություն ստանալը վստահ է եղել, որ հայրը հանդիսանում է միայն տվյալ ընկերության տնօրենը, և միայն ժառանգությունն ընդունելիս է տեղեկացվել հոր՝ նշված ընկերությունում բաժնետեր հանդիսանալու փաստի վերաբերյալ: Ավելացրեց նաև, որ նշված ընկերության վերաբերյալ կնոջ հետ երբևէ չի զրուցել, ավելին մշտապես դիրքորոշում է արտահայտել բացի փաստաբանական գործունեությունից, այլ ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու վերաբերյալ և նույնիսկ այլ գործունեությամբ զբաղվելու առաջարկների /հարազատների միջավայրում նման զրույցների շրջանակներում/ պարագայում՝ բացառել է այլ գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը: Վերոնշյալով

պայմանավորված՝ Արմենուհի Բաղիրյանը նույնպես վստահ է եղել, որ ամուսինը զբաղվում է բացառապես փաստաբանական գործունեությամբ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակով և որևէ առևտրային կազմակերպության ներքո այլ ձեռնարկատիրական գործունություն ծավալելու մտադրություն չէր կարող ունենալ: Վերոնշյալի հաշվառմամբ՝ Արմենուհի Բաղիրյանը Հայտարարագիրը լրացնելիս կասկածներ չի ունեցել և հետևաբար միջոցներ չի ձեռնարկել ստուգելու ամուսնու՝ առևտրային կազմակերպություններում ունեցած մասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը: Նիստը նախագահողի (Մարիամ Գալստյան) հարցին, թե եթե նշված առևտրային կազմակերպությունը որևէ դատական գործի շրջանակներում հանդես գար որպես կողմ և Արմենուհի Բաղիրյանը հանդիսանար գործը քննող դատավորը, փաստորեն առաջանալու էր շահերի բախման իրավիճակ, իսկ դատավորը տեղեկացված չէր լինելու նման իրավիճակի առկայության մասին, վերջինս պատասխանեց, որ դա իր բացթողումն է և, ըստ էության, չի բացառվում նման իրավիճակի առաջացումը: Ավելացրեց նաև, որ իրենք ընտանիքում երբևէ չեն քննարկում իրենց աշխատանքային գործունեության մանրամասները: Միաժամանակ, հավելեց, որ Ընկերության գործունեությունից ստացել է շահաբաժին /մոտավորապես 400,000.00 ՀՀ դրամի չափով, թիվը հստակ չի հիշում/ և նշված գումարը չի հանդիսանում այնպիսի գումար, որը որպես եկամուտ կարող էր էական փոփոխություն մտցնել իրենց ընտանեկան բյուջեում կամ որով կարող էր որևէ արժեք ներկայացնող իր ձեռքբերվել և հետևաբար, ողջ վերոնշյալով պայմանավորված՝ վարույթի մասնակցի մոտ կասկածներ չեն առաջացել ամուսնու՝ որևէ առևտրային կազմակերպությունում մասնակցության վերաբերյալ:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/119/2024 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Արմենուհի Սամվելի Բաղիրյանի կողմից 2023 թվականի մայիսի 30-ին Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Ե.1. Մասնակցությունն առևտրային

կազմակերպություններում» ենթաբաժնում տվյալներ ներկայացված չեն ամուսնու՝ (Հայտարարագրում ներկայացված տվյալների համաձայն՝ ամուսնու) Հայկ Ալումյանի, «ՆԻԻՊ-Ալֆա» ՓԲ Ընկերությունում և «Արևահամ» ՍՊ Ընկերությունում մասնակցության վերաբերյալ:

1) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Հայկ Ալումյանը հանդիսանում է «Արևահամ» ՍՊ Ընկերության (ՀՎՀՀ՝) մասնակից 19% բաժնեմասնակցությամբ:

2) «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲ Ընկերության արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում առկա տեղեկատվության համաձայն՝ Հայկ Ալումյանը հանդիսանում է «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲ Ընկերության (ՀՎՀՀ՝) բաժնետոմսերի սեփականատեր (2019 թվականին ձեռք է բերել 5,669 և օտարել 1,470 հատ բաժնետոմս, 2020 թվականին ձեռք է բերել 1,504 հատ, իսկ 2021 թվականին՝ 500 հատ բաժնետոմս):

3.2 Պետական եկամուտների կոմիտեից 2024 թվականի մայիսի 24-ի թիվ 01/71-6/31954-2024 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ «Արևահամ» ՍՊ Ընկերության գործունեությունը 2021 թվականի փետրվարի 11-ից ժամանակավոր դադարեցված է, իսկ «ՆԻԻՊ-Ալֆա» ՓԲ Ընկերությունն ունի գործող կարգավիճակ, և վերջինիս՝ 2022 թվականի շրջանառությունը կազմում է ՀՀ դրամ:

3.3 Հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում առկա չեն Արմենուհի Բաղիրյանի ամուսնու՝ Հայկ Ալումյանի՝ որպես «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի, կողմից ներկայացված Օրենքով պահանջվող հայտարարագրերը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Սամվելի Բաղիրյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և **(կամ) նրա ընտանիքի անդամները**, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Սույն մասի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձ:

4.3 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից

հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ **չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք**:

4.8 Օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր

հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.12 Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան և այդ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ:

4.13 ՀՀ Դատավորների ընդհանուր ժողովի՝ դատավորի վարքագծի կանոնները սահմանելու մասին N 01 որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կանոնի համաձայն՝ դատավորը պետք է խուսափի շահերի բախումից. նա չպետք է թույլ տա, որպեսզի իր ընտանեկան, հասարակական կամ այլ հարաբերություններն ազդեցություն ունենան իր՝ որպես դատավորի առաքելության վրա:

Դատավորը պարտավոր է ողջամտության սահմաններում տեղեկացված լինել իր ընտանիքի անդամների ֆինանսական գործունեության և շահերի մասին:

4.14 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները: Մասնավորապես, շահերի հայտարարագրի դեպքում՝ կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը, հավատարմագրային կառավարման հանձնված լինելը, ընտանիքի անդամի ներկայացվածությունը կազմակերպության կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկություններ:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման***

ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:

Սույն գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Սամվելի Բաղիրյանը Հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ ոչ ամբողջական տվյալները.

Հայտարարագրի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում ներկայացված չէ վերջինիս ամուսնու՝ Հայկ Ալումյանի, «Արևահամ» ՍՊ Ընկերությունում և «ՆԻԻՊ-Ալֆա» ՓԲ Ընկերությունում ունեցած մասնակցության վերաբերյալ տվյալները:

Նշված արարքով Արմենուհի Բաղիրյանը ***խախտել է*** Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրերում առկա են ոչ ամբողջական ներկայացված տվյալներ:

Հաշվի առնելով արձանագրված իրավախախտման նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Արմենուհի Բաղիրյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն

իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Նշված իրավանորմով պայմանավորված՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իր կողմից նախկինում կայացված որոշումներին, մասնավորապես՝ շահերի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ նույն հայտարարագրի «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացվել է հայտարարատուի բաժնեմասնակցությունը առևտրային կազմակերպությանը, սակայն «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում չի ներկայացվել (ՎԻՎ/27/2022): Նշված գործով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացված տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվել է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվել հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն որակվել է որպես նվազ նշանակություն ունեցող, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և գործի վարույթը կարճելու հիմք է հանդիսացել:

Մեկ այլ գործով Հանձնաժողովը նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձը հայտարարագրի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել իր մասնակցությունն առևտրային կազմակերպությունում, սակայն գործում առկա փաստերի համաձայն հաստատվել է, որ առևտրային կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է (ՎԻՎ/05/22): Հանձնաժողովը գտել է, որ կազմակերպության գործունեությունը

ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Մեկ այլ գործով (ՎԻՎ/13/22) Հանձնաժողովը նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի կողմից ներկայացված հայտարարագրի որևէ վերաբերելի բաժնում ներկայացվել է վերջինիս առնչությունը քննարկման առարկա առևտրային կազմակերպությանը:

Տվյալ պարագայում, հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամի մասին չհայտարարագրված տվյալի և այդպիսի տվյալի հետ փոխկապակցության մեջ գտնվող վերջինիս ընտանիքի անդամի կողմից հայտարարագրված տվյալով, ըստ էության, բացահայտվել է պետական պաշտոն զբաղեցնող անձի ընտանիքի անդամի առնչությունը առևտրային կազմակերպությանը, որպիսի պայմաններում ուղենշվել է շահերի հայտարարագրման օրենսդրի կողմից սահմանված նպատակը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ սույն վարույթի շրջանակներում Հանձնաժողովն էական է համարում այն հանգամանքը, որ «Արևահամ» ՍՊ Ընկերության գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում ժամանակավոր դադարեցված է եղել: Նշվածով պայմանավորված՝ տվյալ իրավախախտումը հանրային վտանգավորության տեսանկյունից ունի նվազ նշանակություն, ինչն Օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով նշված խախտման կապակցությամբ պատասխանատվությունից ազատելու և բանավոր դիտողություն հայտարարելու հիմք է հանդիսանում:

Անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից «ՆԻԻՊ-Ալֆա» ՓԲ Ընկերությունում (այսուհետ՝ Ընկերություն) ամուսնու մասնակցության վերաբերյալ չհայտարարագրված տվյալի առնչությամբ արձանագրված իրավախախտմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով քննարկվող փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերում առկա հանգամանքներից, նախևառաջ, այն առումով, որ Ընկերությունը հանդիսացել է ***գործող կարգավիճակ ունեցող*** առևտրային կազմակերպություն՝ հաշվետու ժամանակահատվածում (01.01.2022-31.12.2022) ապահովելով ՀՀ դրամի շրջանառություն:

Հաջորդիվ հաշվի առնելով, որ Հայկ Ալումյանի կողմից չեն ներկայացվել Օրենքով սահմանված 2021 և 2022 թվականների պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրերը, որի արդյունքում Հանձնաժողովն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել վերջինիս՝ Ընկերությունում բաժնեմասնակցության վերաբերյալ Օրենքով պահանջվող տվյալն առհասարակ որևէ ձևով արտացոլված լինելու հանգամանքը պարզելու:

Այսպիսով, սույն գործով հայտնաբերվել և արձանագրվել է հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամի առևտրային կազմակերպությունում բաժնեմասնակցության վերաբերյալ չհայտարարագրված տվյալ, իսկ վերջինիս ընտանիքի անդամի կողմից Օրենքով սահմանված՝ պարտադիր ներկայացման ենթակա հայտարարագրերն առհասարակ չեն ներկայացվել Հանձնաժողով:

Արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ վարույթի մասնակցի կողմից ներկայացվել է դիրքորոշում առ այն, որ տեղյակ չի եղել ամուսնու՝ Ընկերությունում բաժնեմասնակցություն ունենալու հանգամանքին, միաժամանակ, չեն եղել այնպիսի իրադարձություններ, որոնց արդյունքում կարող էր ենթադրել, որ վերջինիս մասնակցությամբ հիմնվել է այդպիսի ընություն, և արարքը կարող է դիտարկվել որպես զանցանք կամ իրավախախտում միայն այն պարագայում, եթե առկա է դիտավորություն /ուղղակի կամ անուղղակի/, իսկ նկարագրված իրավիճակում դիտավորությունն ակնհայտորեն բացակայում է:

Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ հաշվի առնելով, որ հայտարարագրում թվարկված տվյալների ներկայացման միջոցով սպառիչ և ամբողջական կերպով արտացոլվում են ինչպես հայտարարատու պաշտոնատար անձի, այնպես էլ նրա ընտանիքի անդամների բաժնեմասնակցության առնչությամբ անհրաժեշտ տվյալները, օրենսդիրը սահմանել է պարտադիր ներկայացման ենթակա տվյալների շրջանակը կոնկրետ հաշվետու ժամանակահատվածի համար:

Մասնավորապես, Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված է Շահերի հայտարարագրում պարտադիր ներկայացման ենթակա տվյալների շրջանակը, որոնց անզգուշությամբ սխալ

կամ ոչ ամբողջական ներկայացման պարագայում Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Հանձնաժողովի գնահատմամբ վարույթի մասնակիցը, եթե նույնիսկ փաստացի տեղյակ չի եղել իր ամուսնու՝ Ընկերությունում մասնակցության մասին, կարող էր և պարտավոր էր մինչև հայտարարագիր ներկայացնելը համապատասխան գործողությունների միջոցով պարզել արդյո՞ք վերջինս՝ առևտրային կազմակերպություններում մասնակցության ունի, թե ոչ, և միայն այդպիսի տեղեկություն ստանալուց հետո դրանք ներառել հայտարարագրում:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ վարույթի մասնակցի գործողություններում մեղքն առկա չէր լինի, եթե վերջինս ձեռնարկված համապատասխան գործողությունների արդյունքում ստացած լիներ տեղեկություն, որ ամուսնու անվամբ որևէ առևտրային կազմակերպությունում մասնակցության իրավունք գրանցված չէ, մինչդեռ, վերջինս նման փաստարկ չի բերում, և մեղքի բացակայությունը հիմնավորում է միայն այն հանգամանքով, որ ամուսնու՝ Ընկերությունում մասնակցության վերաբերյալ տեղյակ չի եղել, քանի որ ամուսինն իրեն այդ մասին երբևէ չի հայտնել և չեն եղել իրադարձություններ, որոնք իր մոտ կասկածներ կառաջացնեին վերոնշյալի կապակցությամբ:

Ելնելով վերոնշյալից՝ Հանձնաժողովը վերը նշված հիմնավորումներով անհիմն է համարում վարույթի մասնակցի նշված փաստարկները, և գտնում, որ տվյալ դեպքում վերջինիս գործողություններում առկա է եղել **անզգուշությունը:**

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված է ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորի Օրենքին համապատասխան և Օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը:

ՀՀ Դատավորների ընդհանուր ժողովի՝ դատավորի վարքագծի կանոնները սահմանելու մասին N 01 որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կանոնի համաձայն՝ ուղղակիորեն սահմանված է դատավորի պարտականությունը՝ **տեղեկացված լինել իր ընտանիքի անդամների ֆինանսական գործունեության և շահերի մասին:**

Վերոնշյալ դրույթների վերլուծությունից և համադրումից հետևում է, որ դատավորի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձն անվերապահորեն կրում է Օրենքով սահմանված կարգով և Օրենքի պահանջների պահպանմամբ հայտարարագիր ներկայացնելու և իր ընտանիքի անդամների ֆինանսական գործունեության և շահերի մասին տեղեկացված լինելու պարտականություն:

Մինչդեռ, վարույթի մասնակցի կողմից չեն պահպանվել վերոթվարկյալ դրույթների պահանջները՝ իր դիրքորոշման համաձայն՝ տեղեկացված չլինելու, կատարված արարքի հակահիրավական բնույթի վերաբերյալ կասկածներ չունենալու և հետևաբար, մեղքի բացակայության հանգամանքով պայմանավորված:

Այսպես, Օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ **չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք**:

Վերոնշյալի առնչությամբ անդրադառնալով մեղքի բացակայության առնչությամբ սույն վարույթի շրջանակներում վարույթի մասնակցի և վերջինիս ամուսնու կողմից ներկայացված հիմնավորումներին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն իրավախախտման կապակցությամբ վարույթի մասնակցի կողմից չեն ձեռնարկվել բավարար և անհրաժեշտ գործողություններ Օրենքով սահմանված Հայտարարագիրը ներկայացնելուց առաջ վերաբերելի տվյալների ճշգրտման և ամբողջական տեղեկատվության տիրապետման ուղղությամբ: Մինչդեռ, վարույթի մասնակցի ամուսնու կողմից նշված առևտրային կազմակերպության բաժնետոմսերը հորից որպես ժառանգություն ստանալու, հետագայում նույն առևտրային կազմակերպությունում այլ բաժնետոմսեր ձեռքբերելու, Ընկերությունից շահաբաժինների տեսքով եկամուտ ստանալու, ինչպես նաև ամուսնու՝ **Հայկ Ալումյանի կողմից Օրենքով սահմանված հայտարարագրերը ներկայացնելուց հրաժարվելու հանգամանքները** կարող էին բավարար հիմք հանդիսանալ վարույթի մասնակցի մոտ ամուսնու՝ նշված առևտրային կազմակերպությունում ունեցած մասնակցության վերաբերյալ

կասկածներ առաջանալու և հետևաբար տեղեկատվությունը ստուգելու ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար սահմանված է վարչական պատասխանատվություն, իսկ դատավորի պաշտոնը զբաղեցնող անձի համար՝ նաև կարգապահական պատասխանատվություն, տրամաբանական է, որ անձը պահանջվող տվյալները ներկայացնելուց առաջ կատարեր որոշակի գործողություններ, մասնավորապես՝ տարբեր իրավասու մարմիններից /տեղեկատվական շտեմարաններից/ հարցումներ, ընտանիքի անդամին հարցադրումներ, իր կամ ընտանիքի անդամի տիրապետման ներքո գտնվող փաստաթղթերի ուսումնասիրություն և այլ անհրաժեշտ գործողություններ ճշգրիտ և ամբողջական տեղեկատվություն ստանալու նպատակով: Մինչդեռ, վարույթի մասնակցի պարզաբանման և վերջինիս ամուսնու բացատրությունների համաձայն՝ Արմենուհի Բաղիրյանը նշված գործողություններից որևէ մեկը չի կատարել՝ ի սկզբանե համոզվածություն ունենալով, որ նման իրավիճակը բացառված է:

Վերոնշյալից հետևում է, որ Արմենուհի Բաղիրյանը կարող էր և պարտավոր էր կանխատեսել օրենքի՝ բավարար չափով հստակ սահմանված դրույթներն իր կողմից չպահպանելու հետևանքները, սակայն չի ցուցաբերել բավարար պատասխանատվություն անհրաժեշտ տեղեկատվության ճշգրտման և հետո միայն ներկայացման ուղղությամբ:

Տվյալ պարագայում, Հանձնաժողովի համար՝ որպես իր մանդատի շրջանակներում շահերի բախման ինստիտուտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի, էական նշանակություն ունի օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանումը՝ հայտարարագրում հավաստի և ամբողջական տվյալներ ներկայացնելու հայտարարատու անձի պարտականության ոչ պատշաճ կատարման արդյունքում իրավանորմով պաշտպանվող հասարակական հարաբերությունների էությունը:

Այսպիսով, սույն վարույթի շրջանակներում Շահերի հայտարարագրում ընտանիքի անդամի՝ առևտրային կազմակերպությունում մասնակցության վերաբերյալ տվյալների չներկայացման հանգամանքով պայմանավորված, ըստ էության, չի բացահայտվում հայտարարագրման ***հաշվետու ժամանակահատվածում*** պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ ամուսնու առնչությունը առևտրային կազմակերպությանը, որպիսի պայմաններում

կուղենշվեր շահերի հայտարարագրման օրենսդրի կողմից սահմանված նպատակը: Այս կերպ գործնականում խաթարվում է հանրային հաշվետվողականությունը, հայտարարագրված տվյալների ամբողջականության համադրման հնարավորությունը՝ պաշտոնատար անձի կողմից հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման հնարավորության առումով:

Միաժամանակ, անդրադառնալով վարույթի մասնակցի՝ սույն իրավախախտան համար պատասխանատվության կիրառման վաղեմության ժամկետների անցած լինելու և նշված կարգավորումների կիրառման անհրաժեշտության վերաբերյալ դիրքորոշմանը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ տվյալ պարագայում, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի կապակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ սույն գործն իրավասու մարմնի՝ Հանձնաժողովի, կողմից քննվում և վարչական պատասխանատվության միջոցի կիրառման հարցը լուծվում է 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հայտարարագրի առնչությամբ, որը ներկայացվել է Հանձնաժողով 2023 թվականի մայիսի 30-ին: Ինչից հետևում է, որ Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված մեկ տարվա վաղեմության ժամկետը սպառված չէ և հետևաբար, նշված իրավախախտման համար պատասխանատվության կիրառման հարցը կարող է քննարկվել և պատասխանատվություն կիրառելու վերաբերյալ որոշում կարող է կայացվել իրավախախտման՝ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու արարքի կատարումից մեկ տարվա ընթացքում՝ մինչև սույն թվականի մայիսի 30-ը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 21-րդ հոդվածով, 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Արմենուհի Սամվելի Բաղիրյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմենուհի Սամվելի Բաղիրյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արմենուհի Սամվելի Բաղիրյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրերի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ